

ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից  
Հասարակական խորհրդի նախագահ,  
նախարար Ս. Կարապետյանին  
<<Տոմա և Տաթև >> ՍՊԸ տնօրեն, համատեղության կարգով  
<<Գյուղատնտեսության մեքենայացման ԳՀԻ>>  
գիտության գծով փոխտնօրեն Ստյոպա Խոյեցյանից  
Հասցե՝ ք. Երևան-33, Ավետ Ավետիսյան 33 շ, բն 9  
Հեռ. 091 314 943

## ԴԻՄՈՒՄ

### Խորհրդի կազմում ընդգրկվելու մասին

<<Ագրոլրատու>> թիվ 9, 2016թ. <<Ուշադրություն>> հայտարարության համաձայն ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը.

1. Կազմակերպության կանոնադրության պետական գրացման հաամայրը. 80.110.00476,30.06.1997թ.,վկայական: 01Ա-03469:
2. Լիազորված անձի՝ Ստյոպա Խաչատուրի Խոյեցյանի անձնագրի պատճեն:
3. Ամփոփ տեղեկանք վերջին երկու տարում ծավալած գործունեության մասին.  
ՍՊԸ-ը զբաղվել է թռչնաղբի վարակազերծմամբ և դրանից օրգանահանքային պարարտանյութերի պատրաստմամբ և մանրածախ շուկայում իրացնելով:  
Ստացվել է նաև օրգանական հեղուկ պարարտանյութ: Ուսումնասիրվում են դրա իրացման հարցերը:  
Մշակվել են նաև արոտ օգտագործող կոռպերատիվներին և ֆերմերին օգնող <<Առաջարկություններ>>, որոնց համառոտագրումը կցվում է:
4. Հետաքրքրվածության նամակը ներառում է գյուղատնտեսության և գիտության կապի խնդիրները, որոնց մասին պատրաստի <<Առաջարկությունները >> կներկայացվեն խորհրդի քննարկմանը:
5. Հակիրճ վերլուծությունը կփորձենք ներկայացնել խորհրդի քննարկմանը:



Առդիր - 4էԶ

*Handwritten signature*

Ս. Խոյեցյան  
Գյուղատնտեսական վարչաթյուն  
02.05.2016թ.  
03 05 2016  
Մի 5172-16

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք կարող ենք ունենք (համապատասխան մեքենաներ, տեխնոլոգիա, փորձի արդյունքներ) .

1.Տրակտորահարմար տեղանքներում կասեցնել ջրհեղեղները՝ լուծելով նաև հանրապետությունից հարևան երկրներ „փախչող“, անձրևաձնհալ ջրերը հանրապետությունում թողնելու, սակավաջրության, երաշտի, հողի էրոզիայի, տարածքային հրդեհների կանխարգելման խնդիրները, ստեղծելով բնապահպան նոր իրավիճակ:

2.Բարձրացնել արոտների, խոտհարքերի բերքատվությունը մոտավորապես 3 անգամ, բարելավել խոտի որակը, ինչը կնպաստի կաթնամսամթերքի շուկայական մրցունակության և արտադրանքի էական աճին:

3.Լուծել տեղական հումքով (թռչնաղբ, գոմաղբ, մոխիր և այլն) օրգանահանքային վարակազերծված պարարտանյութերի արտադրության խնդիրը, կասեցնելով հողի և բույսերի վարակը, նվազեցնելով անասնապահության և թռչնապահության թափոններից շրջակա միջավայրի և մթնոլորտի աղտոտվածությունը:

4.Ստեղծել ջերմային էներգիայով, այդ թվում արևի և բիոէներգիայի, ինքնաապահովված, անթափոն տեխնոլոգիայով աշխատող մրցունակ անասնաշենքեր (հիմնականում հների հատակագիծը ձևափոխելով), լուծելով նաև ֆերմերների բնակարանների ավտոմատ ջեռուցման խնդիրները, մեծացնելով ֆերմերի շահույթը նաև սպիտակուցային խտանյութ, բիոհումուս վաճառելով:

Խնդրում եմ ՁԵՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ նշված աշխատանքները պիլոտային ծրագրերով գյուղացուն ցուցադրելու՝ ինչը կձևավորի պահանջարկի շուկան, արտադրության կազմակերպումն ու իրացումը:

Եթե առաջարկությունները Ձեզ հետաքրքրեցին, պատրաստ եմ ներկայացնել մանրամասները:

„Գյուղատնտեսության մեքենայացման գիտաարտադրական միավորում,, նախկին տնօրեն, տեխ. գիտ. թեկնածու Ստյոպա Խոյեցյան, հեռ.091-314943:

01.03.16 թ.

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Նոր տեխնոլոգիաների և մեքենաների օգտագործմամբ գյուղացիներից գնվող կաթի քանակը բազմապատիկ անգամ ավելացնելու, նրա որակը բարձրացնելու, ինքնարժեքը իջեցնելու բնագավառում համագործակցելու մասին

1. Կաթի քանակը ավելանում է, որակը բարձրանում, ինքնարժեքն իջնում է արոտներում որակյալ, առատ, էժան խոտ աճեցնելով: Դա իրագործվում է ընկերությունում առկա մեքենայով՝ անձրևաձնհալ <<թափառող>> ջրերը արոտներում պահեստավորելով, չվնասելով խոտածածկույթը, նրա արմատային հողազանգվածը փխրեցնելով (աէրացիա), պարարտացնելով, ենթացանքս կատարելով: Այս ամենը կատարվում է մեքենայի մի անցումով: Հանրապետությունում ներկայումս օգտագործվում է այդ ջրերի միայն 40%: Մնացածը <<գնում են>> հարևան երկրներ: Պարարտանյութը օրգանական է՝ ջերմամշակված թոչնաղբ, որը մրցունակ է ներկրվող հանքային պարարտանյութերի համեմատությամբ, ինչը օրգանիկ կաթնամթերք ստանալու լավ նախադրյալ է: Խնդրում են քննարկել այդ մեքենան արոտներում օգտագործելու հարցը:
2. Կաթի որակի բարձրացման, քանակի ավելացման, ինքնարժեքի իջեցման խնդիրը, բացի վերը նշվածից, լուծվում է նաև կովերի պահման մեր մշակած տեխնոլոգիայով՝ անասնաշենքի համապատասխան ձևափոխմամբ: Առավելություններն են. տաք պտուկելատեղ խորը ցամքարի վրա (ցամքարի տարեկան պահանջարկի 50% չափով), կովերի ցանկությամբ զբոսնելու ազատություն, ավտոմատ կապվել և ազատվել կերակրվելիս, կիթ այդ պահին վակուում խողովակաշարով, օրգանական բարձրորակ պարարտանյութի ստացում և դրանով նաև անձրևորդերի աճեցում, պինդ վառելանյութ՝ պատրաստված օրգանական թափոններից, ջաջուրի ածխի փոշուց, ռոլիկների տեսքով, որոնք հնարավորություն են տալիս ավտոմատացնել գյուղացիների բնակարանների ջեռուցումը:
3. Կովերի պահման այս տեխնոլոգիան որևէ գյուղացու մոտ ներդնելու նախնական, ֆինանսական աջակցություն է հայտնել Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակը:

Եթե առաջարկությունը Ձեզ հետաքրքրեց, պատրաստ եմ ներկայացնել մանրամասները:

Հարգանքներով՝

ՄՊԸ գործադիր տնօրեն

Ս. Խոյեցյան

Հեռ. 091 31 49 43

1. Օրագիր. արևի և բիոէներգիայով աշխատող ֆերմերային բազմապիտանի, կատարելագործված նոր տեղակայանքի պատրաստում, մոնիթորինգ, արտադրություն և իրացում:

2. Էությունը. արևի և բիոէներգիայով տաքացնել օդը այն օգտագործելով.

ա) ձմռանը և վաղ գարնանը`

-ծղոտի հենքի վրա գարու կանաչ զանգված (վիտամինային կեր) ստանալու,

-ծղոտի հակի և թոչնաղբի հենքի վրա լուլիկի, սմբուկի, պղպեղի և այլն, հարևանից շուտ սածիլներ աճեցնելու,

-ջուրը, շինությունները տաքացնելու, իսկ

բ) ամռանը և վաղ աշնանը`

-ջրազրկելու բանջարաբուստային կուլտուրաները, մրգեղենը, դեղաբույսերը,

համային խոտաբույսերը, դրանցից, նաև խաղողի օդու թափուկներից ստացված անասնակերը` երկարատև պահեստավորման համար:

3. Նպատակը. էներգիայի ոչ ավանդական աղբյուրների կիրառմամբ մեծացնել ֆերմերի շահույթը` արտադրանքի որակը բարձրացնելով, ինքնարժեքն իջեցնելով:

4. Արտադրանքի որակը բարձրացվում է.

ա) կաթ, միս, ձու. կենդանիներին, թոչուններին վիտամինացված կեր (գարու կանաչ զանգված) կերակրելով,

բ) բանջարաբուստանային կուլտուրաներ աճեցնելիս, առավելապես օրգանական պարարտանյութ օգտագործելով, ինչը նվազագույնի է հասցնում նիտրատների պարունակությունը բերքում (օրգանական պարարտանյութը ստացվում է ծղոտի հակի և թոչնաղբի համատեղ քայքայումից),

գ) ջրազրկված զանգված. ջերմաստիճանի և արևի ճառագայթների ազդեցության կարգավորմամբ:

5. Արտադրանքի ինքնարժեքն իջնում է`

ա) վիտամինային կերի առկայության շնորհիվ կենդանիների` հատկապես մատղաշի, աճը խթանելով և անկումը կրճատելով,

բ) շուրջ կլոր տարին տեղակայանքը օգտագործելով ( նրա բազմապիտանիության շնորհիվ ),

գ) օդը տաքացնելու համար պրակտիկորեն ծախսեր չանելով (օդը տաքացվում է ինչպես արևի էներգիայով, այնպես էլ ծղոտի և թոչնաղբի օգտագործումով):

6. Տեղակայանքի կառուցվածքը. բաղկացած է էներգետիկ և արտադրական բաժանմունքներից: Էներգետիկ բաժանմունքում կուտակվում է արևի և բիոէներգիան: Տաքացած օդը մտնում է արտադրական բաժանմունք, որտեղ իրագործվում են համ. 2 դիրքում նշված գործընթացները:

7. Նորույթը . էներգետիկ բաժանմունքը ձեռքի ճիգով պատվում է արևի հետագծով, ինչը ի տարբերություն հանրապետությունում գործող արևային չորանոցների, թույլ է տալիս առավելագույն չափով օգտագործել արևի էներգիան (նորույթը ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 24.05.02 թ. գյուտի արտոնագիր է ստացել ` № 1269 A 2 ):

8. Ծրագրի տևողությունը. 1 տարի:

9. Ծրագրի ավարտին սպասվելիք արդյունքները .

ա) Ճշտված տեխնիկատնտեսական ցուցանիշներով գործող տեղակայանք Արագածոտնի մարզում:

բ) Ֆերմերների պատվերով պատրաստել տեղակայանքը:

10. Ծրագիրն իրացնելու ուղղությամբ կատարված աշխատանքերը.

ա) պատրաստվել և փորձարկվել է պտտվող արևային ջերմակուտակիչ – օդատաքացուցիչ- ջրազրկիչի փորձանմուշը: Այս փորձանմուշով ջրազրկվել են առվույտը, սիստորը, ձկնեղենը, որպես անասնակեր օգտագործվող լոլիկի, խաղողի, մրգերի գործարանային խոնավ թափոնները:

բ) փորձարկվել է ծղոտի հենքի վրա գարուց վիտամինային կանաչ զանգված ստանալու տեխնոլոգիան:


գ) ուսումնասիրվել է ծղոտի հակերի և թռչնաղբի համատեղ օգտագործմամբ բանջարաբոստանային կուլտուրաների սածիլների վաղահաս աճեցման (ձմռանը և վաղ գարնանը ) փորձը: Աշնանը և ձմռանը տաքացվել է փորձանմուշին կից գործող հավանոցը:

12. Եզրակացություն.

Առաջարկվող տեղակայանքը կարող է նպաստել ֆերմերի շահույթի ավելացմանը:

*Ս.Խոյեցյան*


*Հեռ. +37491314943*



Արևային ջերմակուտակիչ-օդատաքացուցիչ-ջրագրկիչ



Տաքացվում է կից հավանոցը



Վիտամինացված անասնակեր



Ջրագրկված խաղողի չանչ և կեղև